

**Ֆելդեքն ընդդեմ Սլովակիայի (Feldek v. Slovakia), 2001թ., Appl. No. 29032/95, Մարդու իրավունքների եվրոպական դատարան**

Թեմա՝ զրպարտություն

Ենթաթեմա՝ հանրային անձինք և մարմիններ, պաշտպանության միջոցներ

Թեսթը՝ սահմանված է օրենքով, անհրաժեշտությունը

Սանկցիան՝ ֆինանսական

Վճիռը՝ արտահայտվելու ազատության իրավունքի խախտում, միաձայն

Իրավասությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Սլովակիա

**Ընդհանուր տեղեկատվություն**

Դիմումատուն մեղադրել է նորանշանակ նախարարին իր ֆաշիստական անցյալի համար:

**Գործի հանգամանքները**

Դիմումատուն թերթում հրապարակել է հոդված/պատմվածք/, որով քննարկել է երկրում ղեկավարության փոփոխությունը: Պատմվածքը պարունակում էր հատված, որով ասվում էր հետևյալը.

“SS-ի անդամը և նախկին Չեխոսլովակիայի գաղտնի ոստիկանության” անդամը ողջագուրվեցին: Երկու լրագրողներ մեկնաբանել էին համապատասխան հրապարակումը՝ ասելով, որ “SS-ի նախկին անդամ” արտահայտությունը վերաբերում էր Մշակույթի և տեղեկատվության նորանշանակ նախարարին, որի մասին հայտնի էր այն, որ վերջինս Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ներգրավված է եղել զինված գործողություններում, որոնք ղեկավարվում էին գերմանացիների կողմից: Նախարարը հերքում էր հրապարակել, ի պատասխան որի դիմումատուն հայտարարել էր, որ ինքն ուղղակի մտահոգություն է արտահայտել նորաստեղծ ժողովրդավարական կառավարությունում մի անձի մասնակցության մասին, որն ունեցել է “ֆաշիստական անցյալ”: Նախարարն այնուհետև դիմումատուի դեմ զրպարտության դատական հայց էր հարուցել: Առաջին ատյանի դատարանում դիմումատուն որևէ պատասխանատվության չէր ենթարկվել, իսկ երկրորդում, նրա հայտարարությունները դիտվել էին որպես զրպարտող և նախարարին հնարավորություն էր տրվել այդ եզրակացությունը հրապարակել հինգ լրատվամիջոցում՝ ըստ իր ընտրության:

**Եվրոպական դատարանի վերլուծությունն ու եզրակացությունը**

**Դատարանը գտավ**, որ ներպետական դատարանների որոշումները միջամտություն են հանդիսացել արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ, որը հետապնդում էր այլոց իրավունքների և հեղինակության պաշտպանության նպատակ: Խնդրո առարկան այն հարցն էր, թե արդյոք հիմնավորումը սահմանված էր օրենքով և անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում:

### **«Սահմանված է օրենքով»**

Դատարանը մանրամասնեց՝ «սահմանված է օրենքով» պահանջի իմաստային նշանակությունը.

«Սահմանված է օրենքով» արտահայտության պահանջներից մեկը նախատեսված միջոցի կանխատեսելիությունն է: Նորմը չի կարող օրենք համարվել քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի հնարավորություն տա անձին կարգավորելու իր վարքագիծը: Նա պետք է հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում՝ պատշաճ խորհրդատվությամբ, կանխատեսելու տվյալ հանգամանքներում ողջամտության աստիճանի այն հետեւանքները, որոնք կարող են վրա հասնել տվյալ գործողության արդյունքում: Այդ հետևանքները չպետք է կանխատեսելի լինեն բացարձակ որոշակիությամբ. Փորձը ցույց է տալիս, որ դրան հնարավոր չէ հասնել: Մինչ որոշակիությունը օրենքում չափազանց ցանկալի է, այն կարող է հանգեցնել քարացածության, իսկ օրենքը պետք է կարողանա համաքայլ շարժվել փոփոխվող հանգամանքներին: Համապատասխանաբար, շատ օրենքներ, անխուսափելիորեն ձևակերպված են այնպիսի եզրերով, որոնք այս կամ այն աստիճան անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառությունը պրակտիկայի խնդիր են:

Դատարանը գտավ, որ միջամտությունը տվյալ գործով հիմնված էր իրավական հիմքերի վրա, որոնք նախատեսված էին քաղաքացիական օրենսգրքում, և չհամարեց, որ այս իրավական դրույթների և պրակտիկայի կիրառումը դիմումատուի գործով, ավելի հեռուն է գնում, քան կարող էր ողջամտորեն կանխատեսվել համապատասխան հանգամանքներում: *Հետևաբար, միջամտությունը սահմանված էր օրենքով:*

### **Արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը**

Դատարանը շեշտեց խոսքի ազատության իրավունքի կարևորությունը:

«Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության էական հիմնասյուներից է եւ դրա առաջընթացի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս

ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում անվնաս, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»: Արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն արտահայտված տեղեկությունների և գաղափարների բովանդակությունը, այլև այն ձևը, որով դրանք արտահայտվել են: Այս ազատությունը ենթակա է որոշ բացառությունների, որոնք պետք է նեղ մեկնաբանության ենթարկվեն:

Դատարանը շեշտեց, որ քաղաքական բանավեճը ունի չափազանց մեծ կարևորություն:

Ազատ քաղաքական բանավեճի խթանումը ժողովրդավարական հասարակության կարևորագույն բնութագրերից է: Դատարանը բարձրագույն կարևորություն է տալիս արտահայտվելու ազատությանը քաղաքական բանավեճի համատեքստում և գտնում է, որ շատ հիմնավոր պատճառներ են անհրաժեշտ քաղաքական խոսքի սահմանափակումն արդարացնելու համար: Անհատական գործերով քաղաքական խոսքի նկատմամբ լայն սահմանափակումներ նախատեսելը՝ անկասկած կազդի արտահայտվելու ազատության նկատմամբ հարգանքի վրա համապատասխան պետությունում:

## **Անհրաժեշտությունը**

Դատարանը կրկին հիշատակում է այն հիմնական սկզբունքները, որոնք բխում են «անհրաժեշտության» պահանջից:

«Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պայմանը պահանջում է Դատարանից որոշել, թե արդյո՞ք գանգատի առարկա միջամտությունը բխում է «ճնշող հասարակական կարիքից», արդյո՞ք այն համաչափ է իր առջև դրված «օրինական նպատակին», եւ արդյո՞ք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով ներկայացված պատճառները «վերաբերելի են եւ բավարար»:

Արտահայտվելու ազատության իրավունքը քաղաքական խոսքի կամ հասարակական շահին վերաբերող հարցերի շուրջ բանավեճի նկատմամբ սահմանափակումների համար փոքր շրջանակ է թողնում:

Քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից

և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան:

Որպես ընդհանուր սկզբունք՝ ցանկացած սահմանափակման “անհրաժեշտությունը” արտահայտվելու ազատության նկատմամբ պետք է հիմնավոր ձևով հաստատվի:

Տվյալ գործով Դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ դիմումատուի հայտարարությունը հրապարակվել է խորհրդարանական ընտրությունից և նոր կառավարության նշանակումից հետո, որը ներառում էր նաև նոր նշանակված համապատասխան նախարարին, և Սլովակիայի սուվերենության վերաբերյալ հռչակագրի ընդունումից հետո: Վիճարկվող հայտարարությամբ դիմողը արտահայտել է լուրջ մտահոգություն կառավարության ժողովրդավարական բնույթի պահպանման վերաբերյալ՝ քննադատելով նախարարին վկայակոչված ֆաշիստական անցյալի համար, որը նա անհամատեղելի է համարել Կառավարության անդամի անձնական հատկանիշների հետ: Ավելին, այն առնչվել է կառավարության անդամին, նախարարին, հանրային անձին, որի նկատմամբ ընունելի քննադատության շրջանակներն ավելի լայն են, քան մասնավոր անձի նկատմամբ: Դատարանը նշել է, որ դիմումատուի հայտարարությունը պարունակում էր կոպիտ արտահայտություններ, որոնք, սակայն փաստական հիմքից զուրկ չէին, և չկար որևէ ենթադրություն առ այն, որ դրանք արվել են անբարեխիղճ ձևով՝ որպես իրավաչափ նպատակ ունենալով՝ նորաստեղծ պետության /որի քաղաքացին էր հանդիսանում վերջինս/ ժողովրդավարական զարգացման պաշտպանությունը:

Դատարանը նշել է նաև, որ դիմումատուի արտահայտությունը գնահատողական դատողություն էր, որի ճշմարտացիությունն ապացուցման ենթակա չէ: Դա կարևոր հանգամանք է հանդիսանում:

*Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Գնահատողական դատողության ճշմարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը 10-րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է: Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց:*

Դատարանը չի գտել, որ դիմումատուի կողմից «ֆաշիստական անցյալ» արտահայտության զուտ օգտագործումը հանդիսացել է փաստերի բացարձակ շարադրանք: Եզրը լայն էր եւ կարող էր վերաբերել տարբեր գաղափարների թե իր նշանակության, թե բովանդակության առումով: Այդ իմաստներից մեկը կարող էր լինել այն, որ նա անդամակցել էր ֆաշիստական

կազմակերպությանը, և դա չէր ենթադրում հատուկ գործողություններ ֆաշիստական գաղափարները քարոզելու առումով:

Ներպետական դատարանը հիմնել է իր հետևությունը, ի թիվս այլ հանգամանքների, նաև այն փաստի վրա, որ դիմումատուն չի ունեցել փաստական հիմքեր այն գնահատողական դատողության համար, որն արել է: Եվրոպական դատարանը գտել է, որ դա արտահայտվելու ազատության իրավունքի սխալ մեկնաբանություն է:

*Դատարանը որպես սկզբունք չի կարող ընդունել այն հետևությունը, որ գնահատողական դատողություն է միայն այն, ինչ կարող է գուգորդվել հաստատող փաստերով: Գնահատողական դատողության և այն պաշտպանող փաստերի միջև կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ գործի հանգամանքներից կախված: Դատարանը բավարարված է նրանով, որ դիմողի կողմից արված գնահատողական դատողությունը հիմնված էր այնպիսի տեղեկությունների վրա, որոնք արդեն հայտնի էին լայն հանրությանը. նախարարի քաղաքական կյանքը հայտնի էր, իսկ նրա անցյալի վերաբերյալ տեղեկությունները առկա էին դիմումատուի հայտարարությունից առաջ լույս տեսած մամուլի հրապարակումներում, ինչպես նաև նախարարի կողմից հրապարակված գրքում: Ներպետական դատարանը չէր կարողացել հիմնավորել ճնշող հասարակական կարիքը՝ նախարարի, որպես հանրային անձի, անձնական իրավունքների պաշտպանության համար՝ դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ, ինչպես նաև այս ազատությունը խթանելու ընդհանուր շահի նկատմամբ, երբ քննարկվում են հասարակական նշանակության հարցեր:*

**ՄԻԵԴ-ը ճանաչել էր դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի խախտումը:**